ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յուլիսի 4-ին Ազգիս Վեհափառ Հայրապետը ժամանեց Բորժոմ, ուր օթևանեց Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայևիչի հին ապարանքում։ Նորին Օծութիւնը կէս օրուան ժամը 2-ին այցելեց Մեծ Իշխան Նիկոլայ Միխայելովիչին, որից սիրով հիւրընկալուեցաւ և որի փոխայցելութիւնն ընդունեց երեկոյեան ժամը 5-ին։

Բորժոմում Նորին Սրբութեան ներկայացան հայ հասարակութեան պատգամաւորներն ու տեղական ամարանոցաւորները, որոնց ցնծութեան չափ չը կար, որ արժանացել էին Հայրիկի տեսութեան։

Յաջորդ օրը Վեհափառ Հայրապետը իւր շքախմբով և Ախալցխայի պատգամաւորների ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Ախալցխայ, ուր և ժամանեց երեկոյեան դէմ։ Ընդառաջել էին մի ահագին բազմութիւն, որի բարձրագոչ «կեցցէ»ների ձայնը օդն էր թնդեցնում։

Վեհափառ Հայրիկը անհուն ցնծութիւն պատճառեց Ախալցխայի հայ հասարակութեան՝ երբ շաբաթ օրը հանդիսաւոր պատարագից յետոյ մի քարոզ խօսեց, այն քարոզներից մին, որ միմիայն Հայրիկը գիտէ խօսել։

Յուլիսի 8-ին Վեհափառ Հայրապետը ուղևորուեց Աբասթումանի ամարանոցավայրը, ուր յաջորդ օրը մեծ հանդիսով ներկայացաւ Նորին Կայսերական Մեծութեան Թագաժառանգ Գէորգի Ալէքսանդրովիչին։ Աբասթումանի հայ հասարակութիւնը ցնծութեան աղաղակներով ընդունեց Հայոց Հայրապետին, շտապեց առնել Նորա օրհնութիւնն և երբ եկաւ բաժանման ժամը, «կեցցէ»ների բարձրաթնդիւն ձայնով ճանապարհ ձգեց կրկին դէպի Ախալցխա։

Յուլիսի 11-ին մեծ բազմութեան ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ Վեհ. Հայրապետը դէպի Ախալքալակ, ուր ժամանեց նոյն օրը երեկոյեան։ Ամբողջ քաղաքն ու շրջակայ հայ գիւղօրէից ժողովուրդն ընդառաջել էր Հայրիկին։

Մեծ էր հայ ժողովրդի սիրոյ արտայայտութիւնը առ իւր պաշտելի Հայրիկն։

Ախալքալակի եկեղեցին խախտուած լինելով ժամանակաւոր մի ամբիոն էր շինուած, ուր Հայրապետը իւր սովորական աղօթքն արաւ։

Երկու օր հայ ժողովրդին մխիթարելուց յետոյ, Նորին Սրբութիւնն ուղևորուեց դէպի Ալէքսանդրոպոլ, ճանապարհին գիշերելով յաջորդ օրը ճաշու միջոցին Ազգիս Հայրապետն իւր շքախմբով և անհամար ընդառաջողների ուղեկցութեամբ մտաւ Ալէքսանդրոպոլ։ Անկարագրելի է հայ հասարակութեան սրտեռանդն ընդունելութիւնը։ այդ մի յաղթական մուտք էր ժողովրդի սրտին տիրող մի մեծ զօրավարի։

Յուլիսի 15-ին Վեհ. Հայրապետը հանդիսաւոր պատարագից յետոյ մի քարոզ խօսեց ս. Թադէոս առաքելոյ և ս. Սանդուխտ կուսի յիշատակը բացատրելով։

Յուլիսի 17-ին Վեհ. Կաթուղիկոսը ուղևորուեց Հառիճոյ վանքը, ուր գիշերելուց յետոյ, միւս օրը շարունակեց ճանապարհն ու հասնելով Բաշ Ապարան, գիշերեց այնտեղ։ Յուլիսի 18-ին գիշերեց Մողնու ս. Գէորգ վանքումն և 20-ին ժամանեց Մայր Աթոռս, եօթնամսեայ բացակայութիւնից յետոյ։

Ս. Էջմիածնի միաբանութիւնը դիմաւորեց սիրելեալ Հայրապետին, որ հանդիսաւոր թափորով մտաւ Մայր Տաճարն ու աղօթքից յետոյ մխիթարեց միաբանութիւնը աւետելով իւր ուղևորութեան յաջող ելքը։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։

ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Ազգիս Վեհ. Հայրապետը Մայր—Աթոռս ժամանելուն յաջորդ օրը Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Նորին Օծութեան։ Հայրապետական տեղապահ Մեսրոպ Արքեպիսկոպոսը ողջունեց Ազգիս Հայրապետի ողջամբ ժամանումն և յայտնեց միաբանութեան մեծ խնդութիւնը, որ արժանացաւ իւր Հօր տեսութեան։ Նորին Օծութիւնը յայտնեց իւր գոհունակութիւնն, որ միաբանութիւնը ողջամբ տեսնում է։

Միաբանութիւնից յետոյ ներկայացան Վեհ. Հայրապետին Ճեմարանի աշակերտներն և ապա ժողովուրդը, որոնց ամէնին ևս օրհնեց։

22-ին յուլիսի Մայր Թադուհու անուանակոչութեան օրը հանդիսաւոր պատարագ մատուցաւ Մայր Տաճարում ի ներկայութեան Նորին Վեհափառութեան, ամբողջ միաբանութեան և ժողովրդի խուռն բազմութեան։ Ս. Պատարագից յետոյ Կայսերական մաղթանք կատարուեցաւ։